

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (6 դեկտեմբերի 1985թ.) 158-րդ հոդվածը լրացնել նոր՝ քսանութերորդ եւ քսանիններորդ մասերով հետեւյալ բովանդակությամբ.

«Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սննդամթերքը, սննդամթերքի հետ շփվող նյութերը եւ սննդային հավելումները Հայաստանի Հանրապետությունում չգրանցված ապրանքային նշաններով վաճառելը (հրացնելը)՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկից մինչեւ հինգհարյուրապատիկի չափով:

«Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի եւ սննդային հավելումների փաթեթավորումների վրա արտադրողի եւ/կամ ներմուծողի կողմից ապրանքային նշանի գրանցման կեղծ համար զետեղելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչեւ հինգհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 238² հոդվածում «եւ քսանհինգերորդ» բառերը փոխարինել «քսանհինգերորդ, քսանութերորդ եւ քսանիններորդ» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկվող օրենքների նախագծերի նպատակն է պաշտպանել մարդու կյանքն ու առողջությունը, բարձրացնել արտադրանքի կամ ծառայությունների նկատմամբ սպառողների վստահությունը, կանխել թուրիմացության մեջ նրանց զցող գործոնները, պաշտպանել արտադրողների եւ ներմուծողների իրավունքները, տնտեսվարող սուբյեկտների համար ստեղծել արդարացի մրցակցային պայմաններ: Նախագիծը կնպաստի որպեսզի շուկայում տնտեսվարողները չնմանակեն եւ/կամ չկեղծեն միմյանց արտադրանքները, ինչպես նաեւ կնպաստի հասարակությունում մտավոր սեփականության նկատմամբ հարգանքի մշակույթի ձեւավորմանը:

Օրենքի նախագծով սահմանված մեխանիզմների պրակտիկ կիրառումը ապահովելու նպատակով միաժամանակ առաջարկվել է փոփոխություններ եւ լրացումներ կատարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները նպատակ ունեն վարչական տուգանքներ կիրառելու մեխանիզմներով պաշտպանել ինչպես սպառողների իրավունքները, այնպես էլ ստեղծել տնտեսվարող սուբյեկտների համար արդարացի մրցակցային պայմաններ՝ գերծ պահելով միմյանց ապրանքները կեղծելու կամ նմանակելու հնարավորությունից:

Օրենքների նախագծերի ուժի մեջ մտնելու ժամկետը (01.01.2012թ.) տնտեսվարողներին հնարավորություն է տալիս գերծ մնալ նյութական կորուստներից, ինչպես նաեւ թույլ է տալիս ունենալով բավականաչափ ժամկետ նախապատրաստվելու օրենքի կիրառությանը՝ դիմելու եւ գրանցելու իրենց ապրանքային նշանները (գործընթացի առավելագույն ժամկետը ութ ամիս է) եւ փոխելու ապրանքների փաթեթավորումները:

Չեղիճակներ` [Արծվիկ Մինասյան](#), [Կարեն Վարդանյան](#), [Արա Նռանյան](#), [Ստյոպա Սաֆարյան](#), [Վարդան Բոստանջյան](#), [Արմեն Մարտիրոսյան](#), [Ռուզաննա Առաքելյան](#), [Յակոբ Յակոբյան](#)